ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

09.12.2016թ. կնքված N ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/3-16/48 ծածկագրով Պետության կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման գնման պայմանագրի

ք.Երևան «20» դեկտեմբեր 2016թ.

«ՀՀ կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի գործերի կառավարիչ Դ. Բեգլարյանի, որը գործում է «ՀՀ կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Մ. Նիկողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), հիմք ընդունելով 09.12.2016թ. կնքված N «ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/3-16/48» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի 4.1 կետում «1369700 (մեկ միլիոն երեք հարյուր վաթսունինը հազար յոթ հարյուր)» թվերն ու բառերը փոխարինել «1639700 (մեկ միլիոն վեց հարյուր երեսսունինը հազար յոթ հարյուր)» թվերով ու բառերով:

1.2 Պայմանագրի Հավելված N 2.-ի (Վճարման ժամանակացույցի) «դեկտեմբեր» և «Ընդամենը տարի» սյունակներում «1369700» թվերը փոխարինել «1639700» թվերով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարության աշխատակազմ	«Գարանտսերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք	ք.Երևան, Թբիլիսյան խճ. N20
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011022085	Հ/Հ 193004674290
ՀՎՀՀ 02505554	ՀՎՀՀ 00840437
էլ. հասցեն՝ gnumner@gov.am	էլ. հասցեն՝ hyundaigarant@yahoo.com
	հեռ. 28-54-47
----------	----------
/Դ. Բեգլարյան/	/Մ. Նիկողոսյան/
Կ.Տ	Կ.Տ